Արձանագրություն 4

«Վեդու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի 13.05.2025թ.

ժամը 10:30

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահող՝ Սամվել Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Անահիտ Սիմոնյան, Հասմիկ Գաբրիելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ամիրջանյան

## 1. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտում հայտնաբերած անհամապատասխանությունները շտկելու մասին

1.1 Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետով և հիմք ընդունելով «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն այդ մասին ապրիլի 8-ին www.eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամաաատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

## 2. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում ստացված հարցման և տրված պարզաբանման մասին

30.04.2025 թվականին հնարավոր մասնակիցների կողմից կատարվել է հարցում

**Հարցում 1.**

Հարգելի պատվիրատու 16-րդ չափաբաժնում Խնդրում եմ պարզաբանել արդյոք ընդունելի է 2.5 Կիլովատ տարբերակը: 24-րդ չափաբաժնում Ընդունելի է արդյոք Էլեկտրամագնիսական արգելակը «Կենտրոնական արգելակի (ոտնակի տեսքով) »-ի փոխարեն: Ընդունելի է արդյոք 260 mm ± 20 mm «Հորիզոնական և երկայնական շարժումն ոչ պակաս քան՝ 330 մմ ± 30 մմ»-ի փոխարեն: Ընդունելի է արդյոք 60°±2°, down:18°±2° արժեքը «Շարժումը (Backboard upwards/downwards)՝ ոչ պակաս քան 70°/10° »-ի փոխարեն: Ընդունելի է արդյոք '-22°±2°& ≥+22°±2° արժեքը «Տրենդելենբուրգ՝ ոչ պակաս քան -25°/+25° »-ի փոխարեն: Պարտադիր է արդյոք «Երիկամային կամրջակի շարժը» ցուցանիշը:

**Պարզաբանում 1.** Հարգելի Մասնակից, «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնման ընթացակագարը հայտարարված է 1 չափաբաժնով, հետևաբար 16-րդ չափաբաժնով ապրանք չի կարող ներկայացված լինել:

**Հարցում 2.**

Հարգելի պատվիրատու Ընդունելի է արդյոք Էլեկտրամագնիսական արգելակը «Կենտրոնական արգելակի (ոտնակի տեսքով)»-ի փոխարեն: Ընդունելի է արդյոք 260 mm ± 20 mm «Հորիզոնական և երկայնական շարժումն ոչ պակաս քան՝ 330 մմ ± 30 մմ»-ի փոխարեն: Ընդունելի է արդյոք 60°±2°, down:18°±2° արժեքը «Շարժումը (Backboard upwards/downwards)՝ ոչ պակաս քան 70°/10° »-ի փոխարեն: Ընդունելի է արդյոք '-22°±2°& ≥+22°±2° արժեքը «Տրենդելենբուրգ՝ ոչ պակաս քան -25°/+25° »-ի փոխարեն: Պարտադիր է

արդյոք «Երիկամային կամրջակի շարժը» ցուցանիշը: Խնդրում եմ հիմք ընդունել այս պարզաբանումը:

Պարզաբանում: Հարգելի Մասնակից, «Հարցմանն ի պատասխան հարկ ենք համարում նշել, որ Կենտրոնական արգելակի (ոտնակի տեսքով) և «Երիկամային կամրջակի շարժը» ցուցանիշները պարտադիր պայման է: Իսկ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում չափսերը հանդիսանում են վերջնական տարբերակ:»

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

**3. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների, պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին**

3.1 Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. № 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետով և «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց. նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը գնահատել բավարար, և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից, մնացած մասնակիցներին՝ այդպիսիք չճանաչված մասնակիցներ:

3.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝ հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո օրենքով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել ընտրված մասնակցին:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Սիմոնյան

_____ Հ. Գաբրիելյան

Քարտուղար՝ _____ Գ. Ամիրջանյան